ՀՈԴՎԱԾՆԵՐ С Т А Т Ь И

ԿՈՄՈՒՆԻԶՄ ԿԱՌՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1961 թ. հոկտեմբերի 17-ից մինչև 31-ը տեղի ունեցավ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարը, որի աշխատանքներին հսկայական և շրջացող հետաքրքրությամբ հետևում էր ամբողջ աշխարհի առաջադեմ մարդկությունը: Համագումարը ընդունեց ԱՄԿՊ Կենտկոմի հաշվետվությունը անցած 6 տարիների ընթացքում կատարված աշխատանքների մասին, ընդունեց պարտիայի նոր Ծրագիրը՝ մեր երկրում կոմունիստական հասարակարգի ստեղծման այդ մեծ խարտիան, որի մեջ մարմնավորված են համայն աշխարհի աշխատավոր մարդկանց լավագույն իղձերն ու հույսերը: Համագումարը ընդունեց պարտիայի նոր Կանոնադրությունը:

Համագումարը լսեց և ընդունեց ԱՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի հաշվետվության և Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագրի մասին Կենտկոմի Առաջին քարտուղար ընկեր Ն. Ս. Խրուշչովի զեկուցումները: Միաձայն ընդունված իր բանաձևում համագումարը ամբողջովին և լիովին հավանություն տվեց նրանց և արտաքին քաղաքականության բնագավառում ԱՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի քաղաքական գծին և պրակտիկ գործունեությանը, ինչպես նաև ԱՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի հաշվետվության հետևություններին ու առաջարկություններին:

ԱՄԿՊ XXII համագումարի աշխատանքներում իր վառ արտացոլումը գտավ այն ամենը, ինչով ներկայումս ապրում է մարդկությունը, ինչը բուռն կերպով հուզում է նրան: Համագումարը տվեց արդի միջազգային դրության մարքս-լենինյան խոր վերլուծությունը, հանրագումարի բերեց Սովետական Միության և սոցիալիզմի ամբողջ լագերի մեծ հաղթանակների արդյունքները: Նա բացահայտեց կապիտալի երկրներում հակասությունների հետագա սրման պատճառները, բնութագրեց պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի անկասելի աճը և ազգային-ազատագրական շարժման ուժգին վերելքը գաղութային ու կախյալ երկրներում, ցույց տվեց հասարակական զարգացման ժամանակակից էտապի օրինաչափությունները:

XXII համագումարի ընդունած՝ պարտիայի նոր Ծրագրում, որը մեր ժամանակաշրջանի ստեղծագործական մարքսիզմ-լենինիզմի ամենաականավոր փաստաթուղթն է, տրված է այն սխրագործությունների հոյակապ նկարագիրը, որ մեր հերոսական ժողովուրդը կատարել է լենինյան պարտիայի ղեկավարությամբ և որ նա կատարելու է առաջիկա երկու տասնամյակների ընթացքում, կոմունիստական հասարակարգի ծավալուն շինարարության ժամանակաշրջանում: Ծրագրում գիտականորեն հիմնավորված են կոմունիստական հասարակարգի ստեղծման ուղիները, հասարակարգ, որի մասին երազել են մարդկության բազմաթիվ սերունդներ:

* * *

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը մարդկության ողջ պատմության մեջ առաջին անգամ առաջադրում է կոմունիստական հասարակարգի կառուցման գիտականորեն հիմնավորված կոնկրետ պլանը:

Ավելի քան հարյուր տարի առաջ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդներ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը իրենց «Կոմունիստական Մանիֆեստ»-ում պատմության մեջ առաջին անգամ գիտականորեն հիմնավորեցին կապիտալիստական հասարակարգի կործանման և անդասակարգ կոմունիստական հասարակարգի հաղթանակի անխուսափելիությունը: Դա միջազգային բանվորական և կոմունիստական շարժման առաջին ծրագրային փաստաթուղթն էր:

Կապիտալիզմի դեմ վճռական մարտերի նախապատրաստելով Ռուսաստանի պրոլետարիատին, Լենինի ստեղծած բոլշևիկյան պարտիան իր առաջին ծրագրում նշեց սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի ուղիները մեր երկրում: Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակով պարտիայի այդ ծրագիրը լիովին կատարվեց:

Չնայած երկրի ապրած ծանր պայմաններին, օտարերկրյա ինտերվենցիային, հաղթանակաբեր պատերազմին, տնտեսական քայքայմանը, 1918 թ. պարտիան ընդունեց իր երկրորդ ծրագիրը՝ մեր երկրում սոցիալիզմի կառուցման լենինյան պլանը: Սովետական ժողովրդի անձնվեր և ստեղծագործ աշխատանքի շնորհիվ պատմական կարճ ժամանակամիջոցում կենսագործվեց նաև պարտիայի երկրորդ ծրագիրը. սոցիալիզմը մեր երկրում տարավ լիակատար ու վերջնական հաղթանակ:

Մեր պարտիան իր նոր, երրորդ Ծրագիրը մշակելիս հենվել է ՍՍՌՄ ժողովուրդների նախորդ տասնամյակների պայքարի ու նվաճումների, միջազգային բանվորական ամբողջ շարժման արդյունքների վրա: ՍՄԿՊ Ծրագիրը տալիս է ծավալուն բնորոշումը արդի դարաշրջանի, որի հիմնական բովանդակությունը կազմում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայով սկսված անցումը կապիտալիզմից սոցիալիզմին: Այդ փաստաթղթում ցույց են տրվում շահագործողական վերջին հասարակարգի՝ կապիտալիզմի զարգացման հիմնական օրինաչափությունները, բնզգծվում է, որ համաշխարհային կապիտալիստական ողջ սիստեմը հասունացել է պրոլետարիատի սոցիալիստական ռևոլյուցիայի համար, կապիտալիզմը բարձրացյալ, կոմունիստական հասարակարգով փոխարինելու համար: Ծրագիրը բացահայտում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և ՍՍՌՄ-ում սոցիալիզմի հաղթանակի համաշխարհային պատմական նշանակությունը, ամփոփում է Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սովետական ժողովրդի անցած փառապանծ ուղու արդյունքները, պարզ է դարձնում, թե ինչ է սովորեցնում մեր երկրի սոցիալիստական մեծ վերափոխումների փորձը:

«Սովետական ժողովրդի անձնվեր աշխատանքի, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի տեսական ու պրակտիկ գործունեության շնորհիվ,— ասվում է ՍՄԿՊ Ծրագրում,— մարդկությունն ստացավ ռեալ կերպով գոյություն ունեցող սոցիալիստական հասարակարգ և փորձով ստուգված գիտություն սոցիալիզմի կառուցման մասին: Դեպի սոցիալիզմ տանող գլխավոր

ճանապարհը հարթված է։ Այդ ճանապարհով արդեն գնում են շատ ժողովուրդներ, այդ ճանապարհով վաղ թե ուշ կգնան բոլոր ժողովուրդները»։

Այժմ արդեն մարդկության մեկ երրորդը նոր կյանք է կառուցում գիտական կոմունիզմի դրոշի ներքո։ Սոցիալիզմի աշխարհը ընդլայնվում է, կապիտալիզմի աշխարհը՝ նեղանում։ Մեր ժամանակներում գոյացավ համաշխարհային սոցիալիստական սիստեմը, որը ավելի ու ավելի մեծ ազդեցություն է գործում հասարակական զարգացման ընթացքի վրա՝ հօգուտ խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի։

ՍՄԿԿ Ծրագիրը պարունակում է կապիտալիզմի համաշխարհային սիստեմի տնտեսական ճգնաժամի խոր վերլուծությունը։ Այնտեղ համոզիչ կերպով ցույց է տրված, որ աշխատանքի և կապիտալի հակամարտությունը, աճող միլիտարիզմը, գաղութային սիստեմի քայքայումը, իմպերիալիստական երկրների միջև գոյություն ունեցող հակասությունները, բանվոր դասակարգի ռևոլյուցիոն շարժման անշեղ վերելքը, համաշխարհային սոցիալիստական սիստեմի զարգացումը քայքայում և խորտակում են իմպերիալիզմը, տանում դեպի նրա թուլացումն ու կործանումը։

Սոցիալիզմը անխուսափելիորեն ամենուրեք կգա փոխարինելու կապիտալիզմին։ Սովետական ժողովրդի, սոցիալիստական լագերի բոլոր երկրների աշխատավորների հերոսական աշխատանքով կառուցվող նոր աշխարհի հոյակապ շենքը նոր հասարակարգի, ամբողջ մարդկության ապագայի նախատիպն է։

ՍՄԿԿ Ծրագրում տրված է կոմունիզմի համակողմանի բնութագրությունը, ցույց է տրված, թե ինչպիսին կլինեն նրա արտադրողական ուժերը, հասարակական հարաբերությունները, ինչպիսին կլինի կոմունիստական հասարակության մարդը։ Ծրագրում նշվում է, որ առաջիկա երկու տասնամյակների ընթացքում ՍՍՌՄ-ում հիմնականում կկառուցվի կոմունիստական հասարակարգ, որի լիակատար կառուցումը կավարտվի հաջորդ ժամանակաշրջանում։ Մեր պարտիայի և սովետական ժողովրդի գլխավոր տնտեսական խնդիրն է՝ քսան տարվա ընթացքում ստեղծել կոմունիզմի նյութատեխնիկական բազա։

Տնտեսական այդ գլխավոր խնդրի վիթխարիությունը պատկերացնելու համար բավական է բերել հետևյալ համեմատությունները. 20 տարում արդյունաբերական արտադրանքի թողարկումը կաճի առնվազն 6 անգամ, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը՝ մոտավորապես 3,5 անգամ։ Դա նույնն է, թե լրացուցիչ ստեղծվեին ևս հինգ արդյունաբերական և ավելի քան երկու գյուղատնտեսական այնպիսի երկրներ, որպիսին այսօր հանդիսանում է Սովետական Միությունը։

ՍՍՌՄ արդյունաբերությունը երկրորդ տասնամյակի վերջին ի վիճակի կլինի տարեկան արտադրել 2700—3000 միլիարդ կիլովատ/ժամ էլեկտրաէներգիա և ձուլել մոտավորապես 250 միլիոն տոննա պողպատ։ Սովետական Միությունը բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի արտադրության ծավալով մեծ չափով առաջ կանցնի ԱՄՆ-ից։ Մեր Հայրենիքը կունենա աշխարհում ամենակատարյալ և ամենահզոր ինդուստրիան, մասշտաբներով, որակական մակարդակով չտեսնված, կապիտալիզմի համար անհասանելի արտադրողական ուժեր և նյութական հարստություններ։ Գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումների զգալի ավելացումը, նոր տեխնիկայի, քիմիական միջոցների, գյուղատնտեսական գիտության նվաճումների արմատավորումը, կոլ-

տնտեսությունների, կոլտնտեսականների, սովխոզների աշխատողների աշխատանքի արտադրողականության հետևողական բարձրացումը և Ծրագրի նշած մի շարք այլ կարևոր միջոցառումներ ունել կերպով կապահովեն գյուղատնտեսության վերելքը:

ՍՄԿՊ Ծրագիրը սահմանում է, «Ամեն ինչ մարդու համար, հանուն մարդու բարօրության» լոզունգի կենսագործման ուղիները: «Այժմ,—ասված է, Ծրագրում,— բոլոր հնարավորությունները կան ամբողջ բնակչության՝ բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի բարեկեցության արագ բարձրացման համար: ՍՄԿՊ-ն դնում է համաշխարհային պատմական նշանակություն ունեցող խնդիր՝ Սովետական Միությունում ապահովել ամենաբարձր կենսամակարդակ կապիտալիզմի ամեն մի երկրի համեմատությամբ»:

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման համեմատ կանի աշխատավորների բարեկեցությունը: Ազգային եկամուտը կավելանա մոտավորապես 5 անգամ, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ունել եկամուտները՝ ավելի քան 3,5 անգամ: Բնակչության բոլոր խավերի համար կապահովվի նյութական առատություն:

ՍՄԿՊ Ծրագրում ձևակերպված են պարտիայի խնդիրները պետական շինարարության և սոցիալիստական դեմոկրատիայի հետագա զարգացման գործում: Այնտեղ տրված է, գաղափարախոսության, դաստիարակության, կրթության, գիտության և կուլտուրայի բնագավառի միջոցառումների լայն ծրագիր: Զարգացման ժամանակակից էտապում գաղափարական աշխատանքում ամենագլխավորը այն է, որ բոլոր աշխատավորները դաստիարակվեն բարձր գաղափարականությամբ և կոմունիզմի հանդեպ նվիրվածությամբ, աշխատանքի ու հանրային տնտեսության նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի ոգով, հաղթահարվեն բուրժուական հայացքների և բարքերի մնացորդները, իրականացվի անհատի համակողմանի, ներդաշնակ զարգացումը, ստեղծվի հոգևոր կուլտուրայի իսկական առատություն: Պարտիան հատուկ նշանակություն է տալիս աճող սերնդի դաստիարակությանը: ՍՄԿՊ նոր Ծրագրում նշված են կոմունիստական գիտակցականության, դաստիարակության, բարոյական բարձր հատկությունների մշակման ուղիները ու միջոցները, տրված է, կոմունիզմ կառուցողի բարոյական օրենսգիրքը:

Կոմունիզմի համար մղվող պայքարի պրոցեսում արդիականության ամենահասաջավոր գաղափարների՝ մարքսիզմ-լենինիզմի գաղափարների ներգործությամբ ձևավորվում է, կոմունիզմ կառուցող նոր մարդը: Կոմունիզմը վերացնում և ազատագրում է, մարդուն, նրա առջև բացում է, անսահման հնարավորություններ կյանքի և ազատ, ստեղծարար աշխատանքի ասպարեզում:

Համագումարի ընդունած ՍՄԿՊ նոր Ծրագիրը պարզորոշ պատասխան է, տալիս այն հարցին, թե կոմունիզմը ինչպիսի հեռանկարներ է, բաց անում բովանդակ մարդկության առաջադիմության համար: Արդիականության ամենահրատապ պրոբլեմը՝ համաշխարհային նոր պատերազմի կանխման, երկրագնդի վրա կայուն խաղաղության հաստատման պրոբլեմն է: ՍՄԿՊ Ծրագիրը ամբողջ երկրագնդի վրա բարձր պարզում է, ժողովուրդների խաղաղության և բարեկամության դրոշը: Նրա մեջ հզոր, ռազմական տեսակետից ամենաուժեղ երկրի անունից խաղաղություն է, առաջարկվում բոլոր պետություններին, հիմնավորվում է, սոցիալական տարբեր կարգեր ունեցող երկրների խաղաղ գոյակցության կենսական անհրաժեշտությունը, սահմանվում են ՍՄԿՊ խրն-

դիրքերը միջազգային հարաբերությունների ասպարեզում: Պարտիան մեկ անգամ ևս հաստատում է, որ Սովետական Միությունը հետևողականորեն պաշտպանել է ու կպաշտպանի հասարակական տարբեր կառուցվածք ունեցող պետությունների խաղաղ գոյակցության քաղաքականությունը:

Այն պայմաններում, երբ ռազմամոլ իմպերիալիստական շրջանները հրահրում են սպառազինությունների մրցավազք և պատերազմ են սպառնում ժողովուրդներին, ՍՄԿՊ Ծրագիրը ակնբախ կերպով ցույց է տալիս, որ սոցիալիզմը, կոմունիզմը նշանակում են ժողովուրդների խաղաղություն և բարեկամություն, որ պատերազմի վտանգի միակ աղբյուրը իմպերիալիզմն է, որ ժողովուրդների համատեղ ջանքերով կարելի է կանխել նոր պատերազմի վտանգը: Միահամուռ ընդունած իր բանաձևում համագումարը նշեց, որ «Սովետական Միության Կոմունիստական պարտիան կանի այն ամենը, ինչ անհրաժեշտ է պահպանելու և ամրապնդելու ժողովուրդների խաղաղությունն ու բարեկամությունը հանուն սոցիալական առաջադիմության և ժողովուրդների երջանկության վեհ իդեալների հաղթանակի»:

* * *

Սովետական Միության Կոմունիստական պարտիան, որի ստեղծողն ու ոգեշնչողը մեծ Լենինն էր, մեր երկրի աշխատավորներին վստահորեն գրոհի հանեց կապիտալիստական կարգերի դեմ, ապահովեց սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակը ՍՍՌՄ-ում և ծավալեց կոմունիստական շինարարությունը, որն ամբողջ աշխարհին ապշեցնում է իր հսկա մասշտաբներով, նպատակների վեհությամբ և հումանիզմով: Նա պատվով կատարեց ու կատարում է հասարակության ռևոլյուցիոն վերափոխման դեկավարի իր միսիան: «Մեր պարտիան,— համագումարում ասաց ընկեր Ն. Ս. Խրուշչովը,— աշխարհի վրա բարձրացնելով ազատության ջահը, սոցիալիզմի ու կոմունիզմի դրոշը, փոխարինեց XX դարը՝ որպես մարդկության նակատագրի արմատական փոփոխությունների դար: Բոլոր երկրների կոմունիստների մեծ բանակի հերոսական պայքարը, որոնք իրենց հետևից տանում էին ժողովրդական մասսաներին, արագացրել է պատմության ընթացքը, մոտեցրել է մարդկության ամենապայծառ իդեալների իրականացումը: Բայց որքա՞ն կարագահա պատմության ընթացքը, եթե Սովետական Միությունում կառուցված կլինի կոմունիստական հասարակարգ: Կոմունիզմի գործը առաջ է գնում հսկայական քայլերով: Կոմունիզմի դրոշակակիրները՝ մարքս-լենինյան պարտիաները, ապացուցեցին, որ իրենք ռևոլյուցիոներ-նորարարների պարտիաներ են, ժողովրդի երջանկության պաշտպանողներ: Բոլոր երկրների առաջավոր մարդիկ այժմ ամենալավագույնը, ամենապայծառը կապում են կոմունիստների հետ: Կոմունիզմի ուժերը անբիվ-անհամար են: Կոմունիզմի կողմն է կյանքի ճշմարտությունը, պատմության ճշմարտությունը»:

Մեր երկրում կոմունիզմի կառուցումը դարձել է միլիոնավոր մարդկանց առօրյա, կենդանի, ստեղծարար գործը. Պարտիայի XXII համագումարին ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի հաշվետվության մեջ ի մի են բերված վերջին 6 տարիների պայքարի և աշխատանքի հոյակապ արդյունքները, որոնք մեծագույն հպարտություն են առաջացնում սովետական բոլոր մարդկանց և արտասահմանյան մեր բարեկամների մեջ:

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XX համագումարից հետո անցած 6 տարիների ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալը աճել է գրեթե 80 տոկոսով: Մեր երկիրը առաջվա նման ԱՄՆ-ի՞ զգալիորեն գերազանցում է զարգացման տեմպերով, իսկ վերջին տարիներս սկսել է նրանից անցնել նաև արտադրանքի կարևորագույն շատ տեսակների բացարձակ աճով: Այժմ մեր երկիրը տալիս է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի գրեթե մեկ հինգերորդը: Խոշոր հաջողություններ են ձեռք բերված գյուղատնտեսության մեջ, որի զարգացմանը այդ բոլոր տարիներին պարտիան հատուկ ուշադրություն է նվիրել: Յուրացվել են 41,8 միլիոն հեկտար խոպան հողեր. 1956—1960 թթ. տարեկան միջին հաշվով 42 տոկոսով ավելի շատ հացահատիկ է արտադրվել, քան նախորդ տարիներին: Զգալիորեն բարձրացել է սովետական մարդկանց կենսամակարդակը:

Մենք բոլոր հիմքերն ունենք հպարտանալու, որ սովետական հասարակությունը դարձել է ամենակրթված հասարակությունն աշխարհում, իսկ սովետական գիտությունը առաջավոր դիրքեր է գրավել գիտության կարևորագույն բնագավառներում: Կոմունիստական հասարակարգ կառուցողների հիանալի նվաճումների սիմվոլն են հանդիսանում սովետական մարդկանց հաղթական թռիչքները դեպ տիեզերք:

«Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության բնագավառում,—ասված է ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվության մեջ,— մեր մեծ հաջողությունները ձեռք են բերվել պարտիայի լենինյան գծի հաստատակամ ու հետևողական կենսագործման շնորհիվ, որը իր արտահայտությունը գտավ XX համագումարի պատմական որոշումներում: Կենտրոնական Կոմիտեն անհրաժեշտ է համարում զեկուցել, որ XX համագումարի քաղաքական գիծը լիակատար հաղթանակ է տարել: Թելադրված լինելով բուն կյանքից, տոգորված լինելով լենինյան ռևոլյուցիոն ստեղծագործության ոգով, այն դարձել է մեր ամբողջ սովետական ժողովրդի գործը: Պարտիան էլ ավելի է ամրապնդել իր կապերը ժողովրդի հետ, և հենվելով նրա հզոր եռանդի վրա, էլ ավելի է վերացրել Սովետական Միությունը»:

Մեր երկրում սոցիալիստական հասարակարգի կառուցման ժամանակաշրջանում ձեռք բերված կարևորագույն նվաճումներից մեկը սոցիալիստական ազգերի անխախտ բարեկամության ստեղծումն ու ամրապնդումն է, պրոլետարական ինտերնացիոնալիզմի հաղթանակը: Լենինյան ազգային քաղաքականության հետևողական ու անշեղ իրականացման շնորհիվ Սովետական Միությունը դարձել է իրավահավասար, ազատ ժողովուրդների եղբայրական ամրակուռ մի ընտանիք:

ՍՄԿՊ XXII համագումարի նախօրեին տեղի ունեցավ Հայաստանի Կոմպարտիայի XXII համագումարը, որը դրսևորեց Հայաստանի կոմունիստների միասնությունն ու համախմբվածությունը պարտիայի լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը: Համագումարը քննեց և միահամուռ հավանություն տվեց ՍՄԿՊ նոր Ծրագրի ու Կանոնադրության նախագծերին, հանրագումարի բերեց 7-ամյա պլանի կատարման գործում ռեսպուբլիկայի աշխատավորների ձեռք բերած նվաճումները և նշեց ռեսպուբլիկայի արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի բնագավառում տեղ գտած բերությունների վերացման ուղիները:

Սովետական Միության եղբայրական ժողովուրդների համերաշխ բազմազգ ընտանիքում Հայաստանի աշխատավորները ևս մեծագույն նվաճումներով դիմավորեցին հարազատ պարտիայի XXII համագումարը: Ռեսպուբլիկան մեր երկրի բոլոր ժողովուրդների և առաջին հերթին ռուս մեծ ժողովրդի օգնության շնորհիվ դարձել է բարձր զարգացած արդյունաբերության, մեքենայացված գյուղատնտեսության, առաջավոր գիտության ու կուլտուրայի երկիր: Ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալը ՍՄԿՊ XXII համագումարի հրավիրման պահին 70 անգամ գերազանցեց 1913 թ. մակարդակը: Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ստեղծվել և արագորեն զարգանում են քիմիական, էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային, հաստոցաշինական, սարքաշինական և արդյունաբերության ժամանակակից այլ ճյուղեր: Սովետական Հայաստանի ձեռնարկություններում արտադրվող մեքենաշինական սարքավորումները արտահանվում են Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի 37 երկրներ: ՍՄԿՊ XXII համագումարում Հայաստանի Կոմպարտիայի առաջին քարտուղար ընկեր Յա. Ն. Զարոբյանը հրապարակելով վերը նշված փաստերը, հայտարարեց, որ Սովետական Հայաստանը ներկայումս դարձել է համատարած էլեկտրիֆիկացման երկիր, ուր բնակչության մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի արտադրությունը 1960 թ. կազմեց 1478 կիլովատ ժամ, այսինքն ավելի, քան Իտալիայում, Ճապոնիայում, Դանիայում և կապիտալիստական մի շարք այլ երկրներում: «Ես արդեն չեմ խոսում,— ասաց նա,— Արաքսի այն ափին գտնվող մեր հարևանների մասին, որոնց հետ նույնիսկ դժվար է արտադրողական ուժերի զարգացման մակարդակի որևէ համեմատություն կատարել: Օրինակ, բնակչության մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի արտադրությամբ Հայկական ՍՍՌ-ն Թուրքիային գերազանցում է 15, իսկ Իրանին՝ ավելի քան 32 անգամ»: Մեծ հաջողությունների են հասել նաև ռեսպուբլիկայի գյուղի աշխատավորները: Սովետական Միության գիտության և կուլտուրայի զարգացման մեջ մեծ է Հայաստանի գիտնականների, գրողների ու արվեստագետների դրած ավանդը:

Սովետական Հայաստանը իր նվաճումներով ու պայծառ հեռանկարներով մագնիսի պես դեպի իրեն է ձգում արտասահմանում ապրող հայ ժողովրդի լավագույն որդիներին ու դուստրերին: Սովետական կառավարությունը ընդառաջելով սփյուռքահայության խնդրանքներին, որոշել է 1962 թ. սկսած աստիճանաբար կազմակերպել սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը:

* *

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարը հանդիսանում է, մեր երկրի ու պարտիայի կյանքում, ողջ միջազգային կոմունիստական շարժման պատմության մեջ մի կարևոր ուղենիշ, «նշանավորում է մի կարևորագույն փուլ մեր պարտիայի և երկրի կյանքում, կոմունիզմի համար մղվող պայքարում» (Խրուշչով):

Մարքսիստական-լենինյան պարտիաների, և հատկապես Սովետական Միության Կոմունիստական պարտիայի համագումարները արտակարգ մեծ արձագանք են գտնում ամբողջ աշխարհում: ՍՄԿՊ նոր Ծրագրի նախագծի հրապարակման օրվանից ողջ աշխարհի մամուլը լայնորեն քննարկում է այն:

ՍՄԿՊ համագումարները խոշորագույն միջազգային նշանակություն են ստանում, որովհետև մեր պարտիան ղեկավարում է Սովետական հզոր տերությունը, որի ազդեցությունը համաշխարհային պատմության զարգացման վրա օրստօրև մեծանում է: Պարտիայի XXII համագումարը առանձնահատուկ տեղ է գրավում պատմության մեջ. այն մեր երկրի ժողովուրդների առջև բաց արեց կոմունիստական շինարարության հոյակապ հեռանկարը, համընդհանուր երջանկության և նյութական ու հոգևոր կյանքի ամենաբարձր մակարդակին հասնելու հեռանկարը: Այդ բանը երբեմ չի արել և օրգանապես անընդունակ է անելու բուրժուական կամ սոցիալ-ռեֆորմիստական որևէ պարտիա:

Անգլիական հայտնի հրապարակախոս Պետ Սլոուանը, համեմատելով Անգլիայի Լեյբորիստական պարտիայի՝ վերջերս կայացած տարեկան կոնֆերանսը և ՍՄԿՊ XXII համագումարը, «Լեյբոր Մանթլի» պարբերականի սեպտեմբերյան համարում գրում է. մինչդեռ XXII համագումարի ծրագիրը մարդկության առջև բաց է անում նրա ապագայի հոյակապ հեռանկարները, Լեյբորիստական պարտիայի հերթական ծրագիրը՝ «60-ական թվականների ուղենիշները», խոստանում է միայն «Անգլիայի տնտեսական ու քաղաքական դրության աստիճանական վատթարացումը»:

Բիրմայի կին գրող Դաու Ա Մաո «Պիպլ Դեյլի» թերթում մանրամասնորեն վերլուծելով ՍՄԿՊ նոր Ծրագրի հիմնական դրույթները, նշում է, որ այդ Ծրագիրը «միանգամայն հակառակն է համեմատած այն, այսպես կոչված, զարգացման նախագծերին ու անիրագործելի պլաններին, որ կազմում են կապիտալիստական երկրների կառավարող պարտիաները: ՍՄԿՊ Ծրագիրը մի պլան է, որն ընդգրկում է կոնկրետ, պրակտիկայում իրագործելի կետեր»:

ՍՄԿՊ նոր Ծրագիրը բացահայտում է այն ակնառու տարբերությունը, որ գոյություն ունի կոմունիստական և բուրժուական պարտիաների քաղաքականության միջև, սոցիալիզմի և կապիտալիզմի միջև, ցույց է տալիս սոցիալիստական սիստեմի արմատական առավելությունները: Ռեոլյուցիոն Կուբայում հրատարակվող «Նոտիսիաս դե Օ» թերթը հարց է տալիս. «Կարո՞ղ են, արդյոք, Միացյալ Նահանգները ասել, թե իրենք ամեն մի քաղաքացու առաջիկա քսան տարվա ընթացքում կարամադրեն անվճար բնակարան, էլեկտրաէներգիա, ջուր, ջեռուցում, տրանսպորտային սպասարկում, գործարանային հաշիվ, դպրոցական սնունդ, ինչպես այդ արդեն նախատեսված է ՍՄԿՊ Ծրագրում: Կարո՞ղ են, արդյոք, Ամերիկայի Միացյալ Նահանգները հայտարարել, ինչպես այդ անում է ՍՄԿՊ-ն, թե երկրի ներքին պայմանների տեսակետից իրենք կարիք չունեն բանակի»: Եվ անները պատասխանում է իր դրած հարցերին. «Այդ ամենի մասին նրանք չեն համարձակվում նույնիսկ հիշել»:

Մեր պարտիայի յուրաքանչյուր համագումար նշանավորել է դեպի սոցիալիզմի ու կոմունիզմի հաղթանակը կատարված շարժման մի նոր էտապ: Հետպատերազմյան ժամանակաշրջանում մեր երկրի ու պարտիայի կյանքում կարևորագույն իրադարձություններ հանդիսացան պարտիայի XX և XXI համագումարները: Լենինյան զգաստարների կենսատու ոգով տոգորված նրանց որոշումների իրականացմանն է նվիրված պարտիայի ու ժողովրդի հսկայածավալ աշխատանքը վերջին տարիների ընթացքում: XX համագումարով սովետական հասարակարգի պատմության մեջ սկսվեց մի նոր դարաշրջան, որը բնորոշվում է երկրի արտադրողական ուժերի բուռն վերելքով, ժողովրդի բարեկեցության արագ աճով, հոգևոր կյանքի ակտիվ զարգացմամբ: Այդ հա-

սագումարի ընդունած համարձակ որոշումները նոր ուժեր ներշնչեցին սովետական մարդկանց, ստեղծեցին այն բոլոր պայմանները, որ անհրաժեշտ են ժողովրդի ու պարտիայի ստեղծագործական ակտիվ զարգացման համար, պարտիական, սովետական և պետական բոլոր աշխատանքների բարելավման համար: Դրա շնորհիվ վերջին տարիների ընթացքում զգալիորեն բարձրացան արդյունաբերական արտադրության տեմպերը, ձեռք բերվեց գիտա-տեխնիկական մեծ առաջադիմություն, բարելավվեց գյուղատնտեսության վիճակը, մեծ չափով բարձրացավ աշխատավորների կենսամակարդակը:

Այն հսկայական նվաճումները, որ վերջին տարիների ընթացքում սովետական ժողովուրդը ձեռք է բերել կոմունիստական շինարարության բոլոր բնագավառներում, սովետական հասարակության սոցիալ-քաղաքական և գաղափարական միասնության հետագա ամրապնդումը, ինչպես նաև համաշխարհային սոցիալիստական սիստեմի հաջողությունները հանգեցրին ՍՍՌՄ-ում սոցիալիզմի լիակատար ու վերջնական հաղթանակին և հնարավորություն ընձեռեցին անցնելու կոմունիզմի ծավալուն կառուցմանը: Մեր երկրի զարգացման այդ նոր փուլի սկիզբը դրեց ԱՄԿՊ XXI արտահերթ համագումարը, որն ընդունեց ՍՍՌՄ զարգացման 7-ամյա պլանը և մշակեց սոցիալիզմից կոմունիզմին անցնելու հետ կապված տեսական ու գործնական մի շարք կարևոր պրոբլեմներ:

* * *

ԱՄԿՊ XXII համագումարը հանդիսանում է կոմունիզմ կառուցողների համագումար: Նրա փաստաթղթերում առաջին անգամ բացահայտված են կյանքի բոլոր բնագավառներում կոմունիզմի սկզբունքները հաստատելու հեռանկարները, որոշված են նրա նյութատեխնիկական բազայի ստեղծման խնդիրները, կոմունիստական հասարակական հարաբերությունների, կուլտուրայի, գիտակցության զարգացման հարցերը, կոմունիզմի մեծ նշանաբանի՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների» նշանաբանի իրականացման ուղիները: «Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծում, սոցիալիստական հասարակական հարաբերությունների զարգացում, կոմունիստական հասարակարգի մարդու ձևավորում՝ ահա այն կարևորագույն խնդիրները,— ասված է համագումարի ընդունված բանաձևի մեջ,— որ պարտիայի առջև կանգնած են կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանի ներքին քաղաքականության ասպարեզում»::

ԱՄԿՊ նոր Ծրագիրը, որն ընդունեց XXII համագումարը, կառուցված է փաստերի, փորձի, պրակտիկայի ամուր հիմքի վրա: Համագումարն ընդհանրացրեց այն բոլոր արժեքավորը, ինչ կուտակված էր սոցիալիզմի կառուցման ընթացքում, միջոցառումներ մշակեց այն բանի համար, որ կոմունիզմի նորաստեղծ ծիլերն ու բնորոշ գծերը ամեն կերպ զարգանան ու դառնան գերակշռող՝ հասարակության կյանքի բոլոր բնագավառներում: Կոմունիստական պարտիայի մշակած պլանների ու նրա ողջ քաղաքականության տարբերիչ առանձնահատկությունն ու անհաղթահարելի ուժը այն է, որ դրանք գիտականապես բազմակողմանիորեն ու խոր հիմնավորված են և արտացոլում են հասարակական զարգացման հասունացած պահանջները:

ՍՄԿՊ XXII համագումարը ցույց տվեց պարտիայի շարքերի միասնականությունն ու նրա համախմբվածությունը իր լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը: XX համագումարում վճռականորեն դատապարտելով մարքսիզմ-լենինիզմի ոգուն խորթ՝ Ի. Վ. Ստալինի անձի պաշտամունքը և դրա հետ կապված սխալներն ու խեղաթյուրումները, պարտիան վերականգնեց պարտիական կյանքի լենինյան նորմաները և ղեկավարության սկզբունքները, վճռականորեն դատապարտեց սոցիալիստական օրինականության խախտումները, լայն ասպարեզ բացեց ժողովրդի ստեղծագործ ուժերի համար, բնդլայնեց և ամրապնդեց կապերը մասսաների հետ, էլ ավելի բարձրացրեց իր մարտունակությունը: Հետևողականորեն խորացնելով անհատի պաշտամունքի հետ կապված սխալների և խեղաթյուրումների վերացման աշխատանքը, ՍՄԿՊ XXII համագումարում պարտիան մերկացրեց և իր ճանապարհից դեն շպրտեց Մոլոտովի, Կագանովիչի, Մալենկովի և մյուսների հակապարտիական ֆրակցիոն խմբին, որը փորձում էր պարտիային և երկիրը շեղել լենինյան ուղուց: Համագումարը ցուցադրեց Կոմունիստական պարտիայի մեծ միասնությունն ու միաձուլությունը, կոմունիզմի կառուցման վեհ ծրագիրը կենսագործելու նրա անսասան վճռականությունը: Համագումարում արտասահմանյան մարքս-լենինյան 80 պարտիաների պատվիրակությունների ներկայությունը հավաստումն է այն բանի, որ մեր պարտիան պատվով է կատարում իր ինտերնացիոնալ պարտքը: Եղբայրական կոմունիստական պարտիաների պատվիրակությունների ղեկավարների ելույթներում բնդգծվեց ՍՄԿՊ XXII համագումարի և պարտիայի նոր Ծրագրի վիթխարի նշանակությունը միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման համար:

ՍՄԿՊ նոր Ծրագիրը հանդիսանում է մարքս-լենինյան գիտության, գիտական կոմունիզմի տեսության ու պրակտիկայի ստեղծագործական զարգացման մի նոր էտապը: Դա մեր դարաշրջանի Կոմունիստական Մանիֆեստն է, որ խորտակիչ հարված է հասցնում հակակոմունիզմին, բուրժուական զաղափարախոսությանը, ռևիզիոնիզմին ու դոգմատիզմին: ՍՄԿՊ XXII համագումարը, ինչպես նաև նրա աշխատանքներին մասնակցած կոմունիստական ու բանվորական եղբայրական պարտիաների ներկայացուցիչները վճռականորեն դատապարտեցին Ալբանիայի Աշխատանքի պարտիայի ղեկավարների պասակտողական գիծը, որը անհամատեղելի է սոցիալիստական երկրների բարեկամության ու համախմբվածության շահերին և ձեռնտու է իմպերիալիզմին:

Պարտիայի XXII համագումարը հանդիսացավ կենսահաստատ օպտիմիզմի մի հոյակապ ֆորում, որն իր ձգտումներով ուղղված է դեպի մարդկության լուսաշող ապագան: ՍՄԿՊ նոր Ծրագիրը պատասխան է տալիս ժամանակակից կյանքի բոլոր կարևորագույն կենսական հարցերին: Նրանում բացահայտված ու հիմնավորված են կապիտալիստական սիստեմի անխուսափելի կործանումն ու կոմունիստական հասարակարգի հաղթանակը, համաշխարհային կոմունիստական ու բանվորական շարժման զարգացման ուղիները, զաղութատիրության լիակատար լիկվիդացման անհրաժեշտությունը, ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման ուղիները: Մարդկությունն ստացավ մի ոգեշնչող փաստաթուղթ, որը բոլոր երկրների ու ժողովուրդների առջև բաց է անում գիտականորեն հիմնավորված և գործնականում ստուգված ճանապարհը դեպի սոցիալիզմ ու կոմունիզմ: ՍՄԿՊ նոր Ծրագրում նշված մեծ զաղափարները, սկզբունքները ու խնդիրները, տիրապետելով մասսաներին, դառնում են

հզոր նյութական ուժ, որը կհանգեցնի կոմունիզմի իդեալների լիակատար հաղթանակին:

Մեր ապագան տեսանելիորեն և հուզիչ կերպով է, հառնում աշխարհի ժողովուրդների առջև, երբ նրանք կարդում են մեր պարտիայի նոր Ծրագիրը: Նրանք այդ մեծ փաստաթղթում տեսնում են ոչ թե երջանկության պատրանքային երազանքներ, այլ նոր, լավագույն հասարակարգի կառուցման հիմնավորված պլան, մի հասարակարգ, որտեղ կրազավորեն խաղաղությունը, Աշխատանքը, Ազատությունը, Հավասարությունը, Եղբայրությունն ու Երջանկությունը բոլոր ժողովուրդների համար: Մեր ամբողջ ժողովուրդը XXII համագումարի բերանով միահամուռ հավանություն տվեց պարտիայի նոր Ծրագրին և ընկալում է, այն որպես իր կյանքի մեծագույն նպատակ, որպես ի՛ր ծրագիր, որի կենսագործմանը նա նվիրաբերում է իր ստեղծագործական ողջ եռանդը, իր կամքն ու բանականությունը, հոգու և սրտի ողջ հուրը:

Կոմունիստները աշխարհի վրա պարզել են առաջադիմության դրոշը, կոմունիզմի դրոշը: Նրանք մարդկության պատմության մեջ են մտել որպես աշխարհը վերափոխող և նորոգող ամենամեծ ստեղծարար ուժ:

Կոմունիստական հասարակարգի կառուցման մարքս-լենինյան ծրագրով զինված սովետական ժողովուրդը է՛լ ավելի սերտորեն է, համախմբում իր շարքերը ԱՄԿՊ-ի շուրջը և վստահորեն առաջ է, գնում դեպի կոմունիզմ:

Կոմունիզմի գործը անպարտելի է: Նա կհաղթանակի ամբողջ աշխարհում: